

Կ ա ր օ տ

Ա. Ին

Մէջս ամէն օր կ'ալեկոծի ծով մ'անանուն.
 Շրթունքներուս աղն ու լեղին իր կը նստին.
 Հոգիս, նաւակ յանձնուած իր քմայքներուն,
 Ա՛լ չի կրնար դառնալ ափունքը վերքստին:

Ու սրտիս մէջ բան մը կ'այրի բոցահեղեղ,
 Տաք մոխրի կ'իջնէ անձրեւ մ'ըղձանքներուս
 Հոյլին վըրայ: Ու երկտրեակ՝ Թախիծ մ'այնտեղ
 Կը փալէ միշտ Ուրախութեանս հետ ուս առ ուս:

Բաժանումի ժայռին վըրայ, քրոհչֆս առ քեզ
 Կը փըշրըւի: Ու ձեւերդ կ'անգայտանան
 Հորիզոնին փռուող մէզի մը մէջ բեհեզ...:

Ու կարօտը կը կըծկըւի ֆուլա՛յ ֆուլա՛յ ...
 Քեզմէ հեռու, այսպէս մինա՛կ, իմ սիրակա՛ն,
 Ըսպասումի քամբուն վըրայ Յոյսը կուլայ...:

ՄԻՀՐԱՆ

Դամասկոս, 1932